

07-11-2016 32-1

De : cercle armenien cercle\_armenien@yahoo.fr  
Objet : Շամիրամ Սեւակի յիշատակին. Խաչիկ Եղլմազեան «Նոր Յառաջ»/Փարիզ  
Date : Today at 06:16  
À : Cercle Armenien cercle\_armenien@yahoo.fr

### Շամիրամ Սեւակի յիշատակին. Խաչիկ Եղլմազեան



07 Նոյեմբեր 2016 , 10:26

Հայ գրականութեան հսկաներու՝ Դանիէլ Վարուժաններու, Սիամանթոններու, Ռուբէն Զարդարեաններու կողքին՝ իր առանձնաշնորհեալ տեղը գրաւած մտքի մշակի, խիզախ եւ անվեհեր կեցուածքով, պողպատեայ նկարագիրով կազմուած, համամարդկային տարածքի վրայ ունեցած ազգային եզակի ջիղով շաղախուած եւ գաղափարապաշտութեան վեհ համոզումներով տոգորուած, ամենասէւ օրերուն իր ժողովուրդի ցաւերու եւ յոյսերու արտայայտիչը դարձած, ինքնակամ եւ



գիտակցուած նահատակութիւնը ընտրած հերոսի, լիակատար արժանիքներով օժտուած բանաստեղծ-գրագէտ, բժիշկ Ռուբէն Սեւակի աղջկան՝ Շամիրամ Սեւակի մահը խոր ցաւ յառաջացուց մեր բոլորին սրտերուն մէջ:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, Հոկտեմբեր 20-ի յետմիջօրէին Նիսի Ս. Ֆիլիպ եկեղեցւոյ կամարներուն ներքեւ: Այնուհետեւ աճիւնները ամփոփուեցան, նոյն քաղաքի Գոգատ գերեզմանատան մէջ, իր տառապեալ մօր՝ Եանի Սեւակի կողքին:

Ներկայ գտնուեցան ողբացեալի բոլոր հարազատները, Հայաստանի Մարտիլիոյ աւագ հիւպատոս Վարդան Սըրմաքէշ, Սեւակի եղբօրորդին՝ Յովհաննէս Զիլինկիրեան, որ մեղուի մը ժրաջանութեամբ աշխատելով, իր ամբողջ կեանքը տուաւ Ռուբէն Սեւակի գործին ծանօթացման եւ տարածման համար: Արարողութեան նախագահեց ողբացեալի հարազատ բարեկամ եւ Ռ. Սեւակի յիշատակը միշտ թարմ պահելու աշխատանքին, տարիներով, իր գործօն մասնակցութիւնը բերած Տարօն եպիսկոպոս Ծերեճեան, որ իր խօսքին մէջ ծանրացաւ հանգուցեալի կեանքին կարեւոր անցուղարձերուն վրայ: Հոս կ'արժէ յիշել, թէ Շամիրամի մայրը՝ Տիկին Սեւակ ի՞նչ տառապալից եւ հոգեպէս ընկճուած օրեր ապրեցաւ, երբ Սեւակ 24 Ապրիլ 1915-ի յաջորդող շաբաթներուն Չանկըրը աքսորուեցաւ, Կոմիտաս Վարդապետի, Դանիէլ Վարուժանի, Բիւզանդ Քէչեանի, Տիրան Գէլէկեանի եւ բոլոր անոնց հետ, որոնք Հայ ազգին հաւատաւոր առաջնորդներն էին:

Ռուբէն Սեւակ 1905-էն մինչեւ 1914 Ձուկցերիա ապրելէն, հոն որպէս բժիշկ աշխատելէն, բազմաթիւ քերթուածներ գրելէն վերջ, Առաջին համաշխարհային պատերազմին հռչակուելէն հազիւ երկու ամիս առաջ, Պոլիս կը վերադառնայ, ընտանիքին հետ: Տիկին Եանի Պոլսոյ մէջ հանգիստ չի գտներ: Նախագգացումը կ'ունենայ գալիք սեւ եւ ճակատագրական օրերուն: Կ'առաջարկէ իր ամուսնոյն ետ վերադառնալ: Կը մերժուի: 1915 Յունիս 22-ին կը ձերբակալուի Ռ. Սեւակ եւ կ'աքսորուի Չանկըրը: Տիկին Սեւակ, քաղաքացիութեամբ գերմանուհի, բազմիցս անգամներ կը փափաքի ժամադրուիլ գերման դեսպան Վանկէնհայմի հետ, իր միջամտութիւնը խնդրելու, որպէսզի իր ամուսինը ազատ արձակուի: Կը մերժուի, զանազան պատրուակներով: Վերջապէս Օգոստոս ամսուն մէջ՝ Վանկէնհայմ կ'ընդունի Ե. Սեւակը եւ անոր կու տայ իր տխրահուշակ պատասխանը. «Դուն թշուառական Գերմանացի, լքեցիր ազգդ, ամուսնացար այս Հայուն հետ եւ հիմա կու գաս խնդրելու, որ ազատեմ զինքը: Ան ետ պիտի չգայ անգամ մըն ալ: Անոնք մեռնելու գացին»:

26 Օգոստոս 1915-ին Ռուբէն Սեւակ կը նահատակուի: Տիկին Սեւակ այս ցաւալի լուրը ստանալէ վերջ, Սեպտեմբեր 17-ին, որբացած իր երկու երախաներուն՝ Լեւոնի եւ Շամիրամի հետ Պոլիսէն կը մեկնի Լօզան:

Իր շատ սիրեցեալ ամուսնոյն նահատակութիւնը խոր կսկիծով կը լեցնէ Տիկին Սեւակի սիրտը: Կը հրաժարի գերմանական հպատակութենէն 28 Մարտ 1919-ին, Լօզանի Հայաստանի պետութեան ներկայացուցչութեան դիմելով, կը ստանայ ՀՀ քաղաքացիութեան վկայագիր: Պատերազմէն ետք վերջնապէս կը հաստատուի Ֆրանսա, ուր Փիլէնեաններու շրջանը գտնուող եւ զինուորական համազգեստներ կարող գործատուներու մէջ կ'աշխատի իր զաւակներուն՝ Լեւոնին եւ Շամիրամին լաւագոյն կրթութիւն տալու համար: Աւելի ուշ բնակութիւն կը հաստատէ Նիս, ուր կը մնայ մինչեւ իր մահը: Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ 30 Դեկտեմբեր 1967-ին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

...

Շամիրամ Սեւակի յուղարկաւորութեան ներկայ գտնուեցաւ նաեւ, Նիսի եւ շրջանի հոգեւոր հովիւ՝ Գրիգոր աբեղայ խաչատրեան, որ կարդաց ՀՀ Սփիւռքի նախարարուհի՝ Տիկին Հրանոյշ Յակոբեանի եւ երեւանի Ռուբէն Սեւակ վարժարանի տնօրէնուհիին եւ ուսուցչաց կազմին ցաւակցութեան գիրերը եւ իր խօսքին մէջ ներողութիւն խնդրեց հանգուցեալ Շամիրամէն, քանի որ պարագաներու բերմամբ իր վերջին փափաքը չկրցան իրականացնել եւ յուղարկաւորութիւնը կատարել Հայաստանեայց եկեղեցւոյ կամարներուն ներքեւ...:

Տարօն Սրբազանն ալ ընթեռնուց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի ցաւակցագիրը, ուր Վեհափառը յանուն Գերագոյն հորհուրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան իր վշտակցութիւնը Զիլինկիրեան սգակիր ընտանիքի յայտնելէ ետք, ի միջի այլոց կը գրէ. «Բարեյիշատակ Շամիրամ Սեւակի անցած երկրաւոր ուղին ներկայացնում է ցեղասպանութեան պատճառով որբացեալ հայ մանուկների դժուարին ու տառապալի ճակատագիրը, բայց եւ ամուր կամքն ու վճռականութիւնը՝ նեղութիւնները յաղթահարելու, վեր յառնելու, ապրելու ու բարի գործեր արարելու: Հոգեւոյն Շամիրամը դեռ փոքր երախայ էր, երբ եղեւնի արհաւիրքների մէջ հայրը բանտարկուեց ու սպաննուեց, եւ նա չկարողացաւ ծանաչել իր սիրասուն ծնողին: Բայց Ռուբէն Սեւակի հետ հաղորդակից դարձաւ նրա արժեքաւոր ստեղծագործութիւնների միջոցով: Մեծանուն հորից ժառանգած հայրենասնուիրումի ու ազգասիրութեան ոգով լուսահոգի Ռուբէն Սեւակի մեծագնիւ դուստրը աստուածաշնորհ իր կեանքն ապրեց ազգիս մեծանուն գրողի ժառանգութիւնը տարածելով: Նրա համար մեծ մխիթարութիւն են եղել Մայր Հայրենիք այցելութիւնները եւ այստեղ Ռուբէն Սեւակին նուիրուած միջոցառումներին մասնակցութիւնը: Ջերմութեամբ ենք յիշում, որ երեք տարի առաջ Մայր Աթոռում Ռուբէն Սեւակի եղբօրորդու՝ Յովհաննէս Զիլինկիրեանի բարերարութեամբ, նրա կողմից արժեքաւոր կտաւների, Ռուբէն Սեւակի հեղինակած նկարների, անձնական իրերի ու փաստաթղթերի,

ցուցանմոյշների ընծայաբերմամբ տեղի ունեցաւ Ռուբէն Սեւակի թանգարանի բացումը, որը մեծ խանդավառութեամբ եւ ուրախութեամբ էր համակել Շամիրամ Սեւակին...»:

**Շամիրամ Սեւակի կեանքի ճանապարհը**

Շամիրամ Զիլինկիրեան-Սեւակ ծնած է 10 Յուլիս 1914-ին Պոլսոյ Բանկալթը թաղամասին մէջ: Աւագ եղբայրը Լեւոն կը ծնի 1912-ին Զուլիցերիոյ Լօզան քաղաքը:

Անոնք կը մկրտուին 19 Յունիս 1915-ին, Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան Հայ երաժշտութեան առաքեալին՝ Կոմիտաս Վարդապետի եւ կնքահայրութեամբ՝ Թղթատարութեան նախարար՝ Ոսկան Մարտիկեանի: Մկրտութենէն երեք օրեր յետոյ կը ձերբակալուի իրենց հայրը՝ Սեւակ եւ ինչպէս նշուեցաւ, 26 Օգոստոս 1915-ին կը նահատակուի: Որբացած երկու երախաները իրենց մօր հետ կը մեկնին նախ Լօզան եւ ապա Ֆրանսա, մշտական բնակութիւն հաստատելու համար: Զիլինկիրեան-Սեւակ ընտանիքը 1945-ին, պատերազմէն յետոյ իր կեանքը կը շարունակէ Նիս քաղաքին մէջ, բազմաթիւ դժուարութիւններով:

Շամիրամ Զիլինկիրեան-Սեւակ կ'ամուսնանայ 1962-ին Ժողէֆ Ֆալքոյի հետ: Չքնաղ Շամիրամը իր հօրմէ ստացած պատուիրաններու ընդմէջէն, ամբողջ կեանքի ընթացքին, մօտէն կը հետաքրքրուի իր ընտանիքի պատմութեամբ, հայ ազգի ողբերգութեամբ եւ յատկապէս Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման նուիրական աշխատութեամբ:

Շամիրամ իր հօրմէ ժառանգած գրասիրութեամբ, կը գրէ բանաստեղծութիւններ, ֆրանսերէնով, որոնք կը հրատարակուին 1990-ին, փոքր գրքոյկի մը մէջ: Անոնցմէ յիշենք միայն՝ «Տեղահանուածները», «Իմ հողը», «Պատմութիւնը հողին մէջ է», «Արտասուալից կեանք», եւ այլն: Նոյն գրքոյկին մէջ կը գտնենք նաեւ իր հօրը ուղղած զգայացունց նամակը, ուր ի միջի այլոց կը գրէ.

«... Դուն այս նամակը կը սպասես վաղուց ի վեր, 70 տարիէ ի վեր կը փորձեմ զայն գրել, սակայն բառերը չեն գար, չնայած գլխուս մէջ եռացող մտքերուն: Հայրիկ, յուշէ՛ ինձի այն ճիշդ բառերը այս լռութենէն դուրս գալու համար, որ ժամանակը ոչինչ չնջած է, իմ հերթին քեզի վստահեցնելու, թէ Հայերը քեզ չեն մոռցած, հոս են անոնք, ցեղասպանութեան այն վկաները, որոնք կը լսեն այսօր արդէն աւելի հասկնալի դարձած քու ձայնը, անոնց ջերմ ձայնը կը գօտեպնդէ զիս՝ ստանալու համար այն պատիւները, որոնք քեզի նախատեսուած՝ եւ քու անմար կրակը հսկելու համար են...»:

Արտասուալից քու աղջիկը՝

Շամիրամ:

Հայոց ցեղասպանութեան ճանաչման օրինագծի քննարկման առթիւ 8 Նոյեմբեր 2000-ին հաւաքոյթ մը կը կազմակերպուի Նիսի Պարսամեան համալիրին մէջ: Անշուշտ Շամիրամ ներկայ է հոն: Բազմաթիւ քաղաքական անձնաւորութեանց կարգին հոն է նաեւ Հայոց բարեկամ, Նիսի երեսփոխան եւ փոխքաղաքապետ Ռուտի Սալը, որ կը մօտենայ Սեւակի աղջկան, զրոյց մը կատարելէ յետոյ, իր խօսքին մէջ կ'ըսէ. «...երկու տարեկան հասակին որբացած այս տիկինը ինձի բացատրեց, թէ որքան տակնուվրայ եղաւ իր կեանքը: Իր սրտի եւ հոգիին մէջ նստած այդ պատուուածքը ընդմիշտ պիտի մնար բաց եւ ցաւագին, ինչպէս որ ատիկա կը պատահի սովորաբար իւրաքանչիւր մարդ արարածի հետ, որ չի կրնար իր սուգը կատարել: Այս երեկոյ, կարծես թէ ան հնարաւորութիւնը ունեցաւ ինքնամփոփուելու իր հօր շիրիմին վրայ, այն մարդուն, որուն ցայսօր բաժին ինկած էր միայն իր պատմութեան ժխտումը: Յուզումնալից այս պահուն դժուար էր բառեր գտնել: Տիկինը նայելով աչքերուս մէջ, արժանապատուութեան խոր զգացումով ըսաւ. «Շնորհակալութիւններ»:

Շամիրամ յաճախ կ'այցելէ Մայր Հայրենիք, իր ժողովուրդին եւ հողին հետ հաղորդուելու համար: Կը յարաբերուի երեւանի «Ռուբէն Սեւակ» դպրոցի տնօրէնուհիին եւ ուսուցչաց կազմին հետ: Հոն ներկայ կը գտնուի զանազան հանդիսութիւններու: Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բոլոր ձեռնարկներուն կը բերէ իր մասնակցութիւնը:

11 Յուլիս 2004-ին, Նիսի Բարեգործականի սրահին մէջ Շամիրամի 90-րդ տարեդարձը կը տօնախմբուի մեծ շուքով, ուր ներկայ կ'ըլլայ նաեւ արդէն բարեկամ դարձած Նիսի երեսփոխան Ռուտի Սալ, որ Ֆրանսայի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքին մէջ կարեւոր դեր ունեցողներէն մէկը եղած է:

Մարդ չի հաւատար, թէ չքնաղ, առոյգ, ժպտադէմ Շամիրամը այդ օրը արդէն 90 տարեկան է: Մեծ գոհունակութեամբ եւ հոգեկան բաւարարութեամբ ներկայ կ'ըլլայ մանաւանդ 23 Սեպտեմբեր 2011-ին Նիսի կեդրոնական պողոտաներէն մեկուն վրայ՝ «Հայաստանի պարտէզ»-ին մէջ 1915-ի Հայոց ցեղասպանութեան իբր խորհրդանիշ՝ Ռուբէն Սեւակի յուշարձանի բացման հանդիսութեան:

\*\*\*

Ամբողջացնելու համար այս յիշատակագրութիւնը կ'ուզեմ հակիրճ ձեւով անդրադառնալ Ռուբէն

Սեւակի եղբորորդի՝ Յովհաննէս Զիլինկիրեանի կատարած հսկայ աշխատանքին, եւ նահատակ-  
բանաստեղծի անունն ու գործը միշտ թարմ պահելու մեծ ջանքերուն:

Յովհաննէս Զիլինկիրեան խիզախ նկարագիրով, պրպտող միտքով օժտուած, ազգասէր եւ  
հայրենասէր, Ռուբէն Սեւակի գաղափարապաշտութեան խորապէս հաւատացող, ինչպէս նշուեցաւ  
վերեւ, բառին արմատական իմաստով մեղուի մը ժրաջանութեամբ կ'աշխատի, անոր բոլոր  
գրութիւնները, բանաստեղծութիւնները, նամակները, իր հեղինակած նկարները, անձնական իրերը,  
փաստաթուղթերը ի մի բերելու եւ զանոնք նոր սերունդներու ուշադրութեան յանձնելու համար:  
Գրութիւններով եւ գիրքերով յամառօրէն կը հետապնդէ հայկական հարցը, արդարադատութիւնը,  
ցեղասպանութեան ճանաչման նուիրական գործը: Ամէնուրեք կը քարոզէ Սեւակի  
գաղափարախօսութիւնը: Իրապաշտ վերլուծումներով կը ջանայ հայորդիներու միտքերը  
կեդրոնացնել անցեալի թէ ներկայի քաղաքական խաղերու եւ անցուդարձերու վրայ:

Հրակիրելով Հայաստանէն կամ Սփիւռքէն պատմաբաններ, գրականութեան քննադատներ, կը  
կազմակերպէ բանախօսութիւններ, գրական կամ բանաստեղծական երեկոյթներ:

Կը հիմնէ Ռուբէն Սեւակի անուան «Յիշատակի Տունը», Քայնը Սիւր Մէր քաղաքի մէջ, ուր կը  
ներկայացնէ անոր վերաբերեալ ամէն ինչ:

1994-ին երեւանի Արաբկիր թաղամասի վարժարանը կը մկրտուի Ռուբէն Սեւակի անունով: Մինչեւ  
օրս, Յ. Զիլինկիրեան նիւթական թէ բարոյական իր օժանդակութիւնը կը բերէ այս միջնակարգին:

Երեք տարիներ առաջ Էջմիածնի բակին մէջ Ռուբէն Սեւակի թանգարանի բացումը տեղի կ'ունենայ  
Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի բարեհաճ կարգադրութեամբ եւ գործօն օժանդակութեամբ,  
բարերարութեամբ դարձեալ Յովհաննէս Զիլինկիրեանի:

Կ'արժէ ընդգծել, թէ երեւանի «Ռուբէն Սեւակ» միջնակարգի պարտէզին մէջ Յ. Զիլինկիրեանի  
ջանքերով կը զետեղուի նահատակ-բանաստեղծին կիսանդրին: Հոն, Սեւակ խորհրդաւոր հայեացքով  
կը դիտէ հայութեան անցեալի, ներկայի եւ ապագայի խորհրդանիշ՝ Արարատը, իր պատգամը տալով  
նոր սերունդին, լռելեայն...:

Թո՛ղ միշտ անթառամ մնայ բոլոր նահատակներու, Սեւակի եւ Շամիրամի յիշատակը մեր սրտերուն  
մէջ:

**Խաչիկ Եղւմազեան**

**«Նոր Յառաջ»/ Փարիզ**